

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### Հյուսիսային համալսարանի 2016-2017 ուստարվա գործունեության

#### Հյուսիսային համալսարանի ռեկտոր

#### Բորիս Մակիջյան

Հաշվետու ժամանակահատվածում առաջնորդվելով համալսարանի կանոնադրությամբ, համալսարանի 2016-2020թթ. ռազմավարական ծրագրով՝ Հյուսիսային համալսարանի 2016-2017 ուս. տարվա ընթացքում իրականացված գործունեությունն ուղղված է եղել համալսարանում ուսումնական գործընթացի կատարելագործմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը, կրթության որակի ապահովման համակարգի կատարելագործմանը:

#### 1. Ուսանողների թվակազմը 2016-17 ուստարվա ընթացքում ըստ կրթական ծրագրերի (բակալավր, մագիստրատուրա, բժշկական քոլեջ), մասնագիտությունների և կուրսերի:

ա) 2016-17 ուստարում համալսարանում առկա և հեռակա ուսուցման ձևերով կրթություն է կազմակերպվել՝

##### 1.1 Բակալավրի կրթական ծրագրով՝

h/h	մասնագիտությունը	ուսանողների քանակը
1	իրավագիտություն	428
2	ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	407
3	կառավարում	68
4	ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	48
5	ծրագրային ճարտարագիտություն	8
6	մանկավարժություն և մեթոդիկա	289
7	նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	4
8	տարրական մանկավարժություն և մեթոդիկա	32
9	օտար լեզու և գրականություն	53
10	մասնագիտ. մանկավարժութ. օտար լեզու և գրականություն	6
11	լրագրություն	11
12	հոգեբանություն	35

Ընդամենը՝ 1389

##### 1.2 մագիստրատուրայի կրթական ծրագրով՝

h/h	մասնագիտությունը	ուսանողների քանակը
1	իրավագիտություն	65
2	ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	9
3	կառավարում	7
4	ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	7

5	մանկավարժություն և մեթոդիկա	18
6	օտար լեզու և գրականություն	7
7	լրագրություն	1

Ընդամենը՝ 114

### 1.3 միջին մասնագիտական կրթական ծրագրով՝

h/h	մասնագիտությունը	ուսանողների քանակը
1	«Քույրական գործ» Երևանում	34
2	«Ատամնատեխնիկական գործ» Երևանում	20
3	Ալավերդի քաղաքի «Թումանյան» բաժանմունքում	26

Ընդամենը՝ 80

## 2. Համալսարանի բոլոր սովորողների միջին թիվը 2016-17 ուստարում

h/h	կրթական աստիճան	ուսուցման ձևը	միջին թիվը	Ընդամենը
1	բակալավրիատ	առկա	571	1389
		հեռակա	819	
2	մագիստրատուրա	առկա	39	114
		հեռակա	61	
3	ասպիրանտուրա	առկա	1	7
		հեռակա	6	
4	քոլեջ	առկա	79	
5	ավագ դպրոց	առկա	33	
6	Ընդամենը		1609	

Ուսանողների թվաքանակի կրճատումը Հյուսիսային համալսարանում պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում տիրող իրավիճակով՝ արտագաղթ, ծնելիության ցածր մակարդակ, սոցիալապես անապահով խավերի՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորության բացակայություն և այլն: Մենք տարբեր եղանակներով փորձում ենք ավելի շատ դիմորդներ ներգրավել՝ կազմակերպելով գովազդային արշավներ լրատվամիջոցներով, այցելելով դպրոցներ ու միջին մասնագիտական հաստատություններ, պարբերաբար հանդիպումներ ենք ունենում մայրաքաղաքի և հարակից շրջանների ավագ դպրոցի աշակերտների հետ: Ավելի շատ դիմորդներ ներգրավելու միջոց է նաև ուսանողներին տրված արտոնությունները, զեղչերը և անվանական կրթաթոշակների հատկացումը:

### բ) Համալսարանի աշխատողների թվակազմը

2016-17 ուստարում համալսարանն ունեցել է 139 աշխատող, որից վարչական կազմը՝ 42 մարդ, պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ 80 մարդ, այլ աշխատողներ՝ 17: Գիտական աստիճան ունեն 46-ը, որից դոկտոր՝ 4, թեկնածու՝ 42 դասախոս: Հիմնական դասախոսների թիվը 45-ն է:

#### **զ) Համալսարանի տարեկան աշխատավարձը և մեկ անձին բաժին հասնող միջին աշխատավարձը**

2016-17 ուստարում ընդհանուր հաշվարկված աշխատավարձը կազմել է 140.661.010 դրամ, ամսական հաշվարկված միջին աշխատավարձը՝ 93.030 դրամ:

Բուհի ղեկավարությունը մինչ այժմ աշխատակիցներին ֆինանսապես խրախուսելու հստակ մշակված կարգ չի ունեցել, սակայն պարբերաբար (թեպետ ոչ համակարգված կերպով) խրախուսվել են ներբուհական կյանքին ակտիվ մասնակցություն ունեցող ու նախաձեռնող աշխատակիցները: Այս հարցին առավել համակարգված լուծում տալու համար Որակի ապահովման վարչությունը մշակել է Խրախուսման կարգ, որով արդեն իսկ պարզևատրվել են բուհի հինգ աշխատակից:

#### **2. Ուսման որակի բարձրացմանը միտված միջոցառումներ**

2016 թ. սեպտեմբերին ուսման որակի բարձրացման նպատակով համալսարանում սահմանված «Հովհաննես Թումանյանի», «Նիկոլայ Ռիժկովի», «Վիկտոր Համբարձումյանի», «Սողոմոն Թեղեղյանի», «Կամո Ուղումյանի» և «Աշոտ Փարեմուզյանի» անվանական կրթաթոշակների հատկացման մրցույթին

#### **անվանական կրթաթոշակների են արժանացել՝**

1. Բաղդասարյան Սվետլանա – իրավագիտություն 3-րդ կուրս
2. Մելիքյան Լուսինե - իրավագիտություն 3-րդ կուրս
3. Ապրեայան Տաթևիկ - իրավագիտություն 3-րդ կուրս
4. Կարապետյան Լիանա – օտար լեզու և գրականություն 3-րդ կուրս
5. Բարսեղյան Քրիստինե – Մանկավարժություն և մեթոդիկա 3-րդ կուրս
6. Վարոսյան Ռոզա – Ալավերդու «Թումանյան» բաժանմունք, Ձեռն. Տնտ. և կառավարում 3-րդ կուրս

#### **անվճար ուսուցման իրավունքի են արժանացել՝**

1. Կարինե Մինասյան – իրավագիտություն 2-րդ կուրս
2. Խաչատրյան Սյուզաննա – օտար լեզու և գրականություն 2-րդ կուրս
3. Երիցյան Անի - օտար լեզու և գրականություն 2-րդ կուրս

Ուսման որակը խթանող միջոցառումները մեծ հետաքրքրություն են առաջացնում ուսանողների շրջանում: Բուհի ղեկավարությունը նրանց նախապես տեղեկացնում է և

անվանական կրթաթոշակների, և անվճար ուսուցման իրավունքի արժանանալու պայմանները: Նախանշված ժամանակահատվածում ռեկտորի հրամանով ձևավորված հանձնաժողովը ընտրում է ուսման բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին:

#### **ա) Ուսման վարձի գեղջ**

2016-2017 ուստարում ապրիլյան պատերազմին մասնակցած և բանակից գորացրված շուրջ 30 ուսանողների համար կատարվել է ուսման վարձի գեղջ՝ համապատասխանաբար 30 և 20 տոկոսի չափով, շուրջ 50 ուսանող արժանացել է ուսման վարձի 20 կամ 50 % սոցիալական գեղջի:

#### **բ) ՈԻԳԸ գործունեության մասին**

Հյուսիսային համալսարանի Ուսանողական գիտական ընկերությունը համախմբել է գիտական ներուժ և հետազոտական աշխատանքի հակում ունեցող ուսանողների տարբեր ֆակուլտետներից: ՈԻԳԸ-ն պարբերաբար կազմակերպում է ուսանողական գիտաժողովներ՝ ներգրավելով ինչպես համալսարանի, այնպես էլ տարբեր բուհերի ուսանողներին: Հաշվետու ուստարում ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել է երկու գիտաժողով՝ ‘Հայաստանի Հանրապետության անկախ պետականության զարգացման հեռանկարները ուսանողների աչքերով’ և ‘Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության զարգացման արդի հիմնախնդիրները’: Վերջին գիտաժողովը 2017 թ. մայիսի 30-ին կազմակերպել էին Հյուսիսային և Արցախի պետական համալսարանների ուսանողական գիտական ընկերությունները: Արդեն իսկ լույս է տեսել «Հայաստանի Հանրապետության անկախ պետականության զարգացման հեռանկարները ուսանողների աչքերով՝ գիտաժողովի նյութերը, որը ներառում է նաև 2015թ. անցկացված «Ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները ուսանողների աչքերով՝ գիտաժողովի նյութերը: Տպագրման փուլում է ‘Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության զարգացման արդի հիմնախնդիրները՝ գիտաժողովի նյութերը:

#### **գ) Դասախոսների կատարելագործում**

Հաշվետու ուսումնական տարում համալսարանի ռեկտորատի անմիջական տեսադաշտում են գտնվել դասախոսական կադրերի որակավորման բարձրացման, հատկապես անգլերեն լեզվից նրանց վերապատրաստման հարցերը: Ձեռնարկվել են ու իրականացվել կոնկրետ միջոցներ այդ ողողությամբ տարվող աշխատանքների ինտենսիվացման, դրանց որակի և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Առիթից օգտվելով նշենք, որ համալսարանում դասախոսների վերապատրաստման դասընթացները կազմակերպված հունի մեջ են դրվել 2013-2014 ուսումնական

տարվանից: Դրանք, որպես կանոն, ընթացել են երեք հիմնական ուղղություններով, այն է՝

1. օտար լեզվի (անգլերեն) խորացված ուսուցում,
2. համակարգչային գործ
3. մանկավարժական վարպետություն (ինտերակտիվ դասավանդման մեթոդիկա):

Վերապատրաստման դասընթացների արդյունքներով ուսումնական տարվա վերջում անցկացվել են համապատասխան ատեստավորումներ:

Անգլերեն լեզվից համալսարանի դասախոսների վերապատրաստման աշխատանքները ինտենսիվ են ընթացել հատկապես 2016-2017 ուսումնական տարում՝ կապված անգլերեն լեզվով ուսուցում կազմակերպելու՝ համալսարանում մշակվող ծրագրերի հետ:

Այդ աշխատանքներին նոր լիցքեր հաղորդեց հատկապես ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի մարտի 3-ի N° 224-Ա/2 հրամանը Հյուսիսային համալսարանին բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով, մի շարք մասնագիտությունների գծով, օտար լեզվով (անգլերեն) օտարերկրյա քաղաքացիների ուսուցման թույլտվություն տալու մասին:

Առաջին անգամ համալսարանին ու նրա պրոֆեսորադասախոսական անձնակազմին հնարավորություն է տրվել յուրովի դրսևորել իր գիտակրթական ու մանկավարժական ներուժը և օրինակելիորեն ու արդի պայմաններում բարձրագույն դպրոցին ներկայացվող բարձր պահանջներին համապատասխան «օտար լեզվով՝ սովյալ դեպքում՝ անգլերենով կազմակերպել օտարերկրյա քաղաքացիների ուսուցումը այնպիսի կարևոր ու արդիական մասնագիտությունների գծով, ինչպիսիք են բակալավրիատի կրթական ծրագրով՝ Տնտեսագիտություն, Կառավարում և Ծրագրային ճարտարագիտություն՝ մասնագիտությունները և մագիստրոսի կրթական ծրագրով՝ Կառավարում մասնագիտությունը:

Համալսարանը, նրա ամբիոններն ու պրոֆեսորադասախոսական անձնակազմը վաղուց էին նախապատրաստվում այդ ծրագրի իրականացմանը, անգլերեն լեզվին տիրապետող մասնագիտական կադրերի պատրաստմանը: Հատկապես վերջին երկու տարիներին համալսարանում ինտենսիվ աշխատանքներ են տարվում անգլերեն լեզվից համալսարանի դասախոսների վերապատրաստման, անգլերեն լեզվով մասնագիտական առարկաներ դասավանդելու՝ նրանց կարողությունների զարգացման ուղղությամբ: Մշակված ու հաստատված ծրագրերով իրականացվում է դասախոսների՝ անգլերեն լեզվի շերտավորված ու նպատակային ուսուցում:

Կատարված աշխատանքների ամփոփման նպատակով՝ ատեստավորման հանձնաժողովը, 2016-2017 ուսումնական տարում համալսարանը անգլերեն լեզվի իմացությամբ բարձրակ մասնագիտական կադրերով կոմպլեկտավորելու

նպատակով, ս.թ. հունիսի 14-ին և 15-ին անցկացրեց համալսարանի դասախոսների ատեստավորում:

Դասախոսների ատեստավորումը կազմակերպվեց և իրականացվեց ատեստավորման հանձնաժողովի կողմից հատուկ այդ նպատակի համար մշակված և հաստատված՝ Հյուսիսային համալսարանի դասախոսների՝ 2017 թվականի հունիսի 12-15-ը անգլերեն լեզվից անցկացվող ատեստավորման ընթացակարգին՝ համապատասխան:

Ատեստավորմանը մասնակցել են համալսարանի 14 դասախոսներ, հիմնականում տնտեսագիտության և կառավարման ու մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոններից, որոնք պետք է 2017-2018 ուսումնական տարվանից սկսած անգլերեն լեզվով մասնագիտական առարկաներ դասավանդեն համալսարանի՝ արտասահմանյան երկրների քաղաքիների բաժնում: Համալսարանի 5 դասախոսներ ատեստավորման հանձնաժողովի կողմից ճանաչվել են որպես անգլերեն լեզվով դասախոսություններ կարդալու պահանջներին լիովին համապատասխանող, 9-ը՝ որպես ներկայացվող պահանջներին վերապահումներով համապատասխանող: Վերջիններիս առաջարկվել է ինտենսիվորեն խորամուխ լինել անգլերեն լեզվի ուսումնասիրության մեջ՝ անգլերեն լեզվից համալսարանի դասախոսների հետագա ատեստավորումներին լրացուցիչ մասնակցելու համար:

Համալսարանը անգլերեն լեզվով դասավանդող կադրերով համալրելու միջոց է ծառայել նաև այլ բուհերից մասնագետների ներգրավումը: Համալսարանում անգլերեն լեզվից դասախոսների ուսուցումը և ատեստավորումը անընդհատ պրոցես է, շարունակելու է նաև առաջիկա ուսումնական տարում:

### **3. Ուսանողների պրակտիկայի կազմակերպման մասին**

(2016-17թթ.) ուստարվա ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքի և գործընթացի բարելավման միջոցառումների մասին

2016-17թթ ուստարվա **առաջին կիսամյակի** պրակտիկան կազմակերպվել և իրականացվել է բուհի և պրակտիկան կազմակերպող կազմակերպությունների միջև նախօրոք կնքված պայմանագրերի և ուսումնական պլանի համաձայն:

Պրակտիկայի աշխատանքները կազմակերպերպվել են ըստ նախապես սահմանված գրաֆիկի ուսումնական պլաններին համապատասխան:

Պրակտիկայի ավարտից հետո՝ 10 օրվա ընթացքում, պայմանագրով նախատեսված գումարները փոխանցվել են համապատասխան կազմակերպությունների հաշվեհամարներին: Մինչ այսօր այդ առումով դժգոհություններ չեն եղել:

***Գործընթացի բարելավման նպատակով իրականացվող աշխատանքները:***

Վերանայվել է Հյուսիսային համալսարանի ուսանողների մասնագիտական պրակտիկայի կանոնակարգը:

2016/17 ուստարում պայմանագրեր են կնքվել և վերակնքվել են պրակտիկա կազմակերպող մի շարք կազմակերպությունների հետ (*«Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ, «Բժշկական էսթետիկ կենտրոն» ՍՊԸ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, «Վան» բիզնես կենտրոն, Երևանի «Օկի Դուկի» մանկապարտեզ*):

Ներկա պահին պրակտիկա կազմակերպող հաստատությունների հետ գործում է 18 պայմանագիր:

Հստակեցվել են համալսարանի պրակտիկայի պատասխանատուների գործառույթները (Համալսարանի պրակտիկայի բաժին, ֆակուլտետի դեկան, համապատասխան մասնագիտական ամբիոններ, ամբիոնային պրակտիկայի դեկավարներ):

**Համալսարանի դեկանատներից և ամբիոններից պրակտիկայի կազմակերպման և անցկացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով եղել են մի շարք առաջարկներ:**

Մասնավորապես նշվում է, որ պրակտիկայի համար նախատեսված չորս շաբաթը կարճ է և չի կարող բավարար փորձ ու փորձառություն ապահովել:

Առաջարկ է եղել վերանայել ուսումնական պլանները՝ երկու պրակտիկաները միացնելով և դարձնելով մեկը, ինչպես նաև պրակտիկան տեղափոխել վերջին կիսամյակ՝ դրանով իսկ կրկնակի երկարաձգել այն:

Նշվում է նաև, որ դպրոցում մանկավարժական պրակտիկան բովանդակային և արդյունավետության առումով անհամեմատ կշահի, եթե պրակտիկային մասնակից լինեն նաև համապատասխան ամբիոններից կցված հայոց լեզու և մաթեմատիկա առարկաների մեթոդիստները. ուսանողները նշված առարկաներից մեթոդական ցուցումների խիստ կարիք են զգում:


Իրականություն է նաև այն, որ դպրոցական և նախադպրոցական մանկավարժական պրակտիկաների ժամանակ ուսանողները դժվարություններ են ունենում «երաժշտություն», «կերպարվեստ» և «տեխնոլոգիա» առարկաների դասավանդման ընթացքում: Առաջարկվում է նշված առարկաների դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև ուսանողների շրջանում «երաժշտություն» ու «կերպարվեստ» առարկաներից տեսական ու գործնական գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ձևավորելու նպատակով, համալսարանում ստեղծել արվեստի մասնագիտական կաբինետ:

Պրակտիկայի գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով առաջարկվում է ամբիոններում պրակտիկայի ղեկավարներ նշանակվեն ռեկտորի հրամանով, իրենց հստակ պարտականություններով ու իրավունքներով:

Համալսարանի ռեկտորատը համապատասխան ամբիոնների հետ կքննարկի և որոշակի լուծումներ կտա բոլոր ներկայացված առաջարկություններին:

#### 4. Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի 2016-2017 ուստարվա գործունեության մասին

2016-2017 ուստարում Հյուսիսային համալսարանն ունեցել է 532 շրջանավարտ, որից բակալավրի կրթական աստիճանով՝ 471 շրջանավարտ, մագիստրոսի կրթական աստիճանով՝ 61 շրջանավարտ: Ըստ մասնագիտությունների շրջանավարտները բաշխվել են՝ իրավագիտություն մասնագիտությամբ՝ 155, տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ՝ 158, մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությամբ՝ 122, ինֆորմատիկա և ՀՏ մասնագիտությամբ՝ 29, օտար լեզու և գրականություն մասնագիտությամբ՝ 35, հոգեբանություն մասնագիտությամբ՝ 19, լրագրություն մասնագիտությամբ՝ 13, հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ՝ 1 շրջանավարտ: Համալսարանի շրջանավարտների զգալի մասն աշխատանքի է անցել իր մասնագիտական ոլորտում:



Հաշվետու տարում Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը համալսարանի ՌԾ-ի և կենտրոնի աշխատանքային պլանի համաձայն կատարել է հետևյալ աշխատանքները.

1. Բուհ-գործատու համագործակցության շրջանակներում կազմակերպվել են մի շարք հանդիպումներ գործատուների հետ, այդ թվում՝ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի



(«Ռոստելեկոմ» Հայաստան), «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի, «ՎՏԲ-Հայաստան» բանկի հետ:

2. Կատարվել է «Հյուսիսային համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ» սոցիոլոգիական հարցում համալսարանի շրջանավարտների շրջանում:
3. Ընդլայնվել է համալսարանի շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվական (ինֆորմացիոն) բազան:
4. Աշխատանքի որոնման հետ կապված ուսանողներին տրամադրվել է տեղեկատվական աջակցություն:

## 5. Գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքների մասին

Համալսարանում հետազոտական աշխատանքներն իրականացնում են այնպիսի ստորաբաժանումներ, ինչպիսիք են համալսարանի Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնը և բուհի ամբիոնները (1. տնտեսագիտության և կառավարման 2. իրավագիտության և հասարակագիտական առարկաների, 3. մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի, 4. մանկավարժության և հոգեբանության, 5. հայոց լեզվի, գրականության և լրագրության, 6. ռոմանագերմանական և ռուս բանասիրության):

Համալսարանում իրականացվող հետազոտական աշխատանքներին ակտիվորեն աջակցում է Հումանիզմի պրոբլեմների ակադեմիան՝ իր հարուստ գիտական ներուժով: Այս առումով հատկանշական է Հյուսիսային համալսարանի ռեկտորատի և Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության 2015 թվականի հունիսի 29-ի համատեղ որոշմամբ ստեղծված՝ Հյուսիսային համալսարանի և Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի «Մարդասիրությունն ընդդեմ ցեղասպանության» միջազգային բուհական կենտրոնը: Ուսումնական տարվա ընթացքում համալսարանի մի շարք դասախոսներ շարունակել են աշխատանքը թեկնածուական, նաև՝ դոկտորական ատենախոսությունների վրա: Համալսարանի գիտական խորհրդի 2017 թվականի մայիսի 12-ի որոշմամբ հաստատման է երաշխավորվել համալսարանի պրակտիկայի ղեկավար, մանկավարժական գիտությունների թեկնածու Արմեն Հարությունյանի «Գեղարվեստական մանկավարժության հիմնախնդիրը հայ դպրոցի պատմության մեջ (XIX-XX դարաշրջան)» դոկտորական ատենախոսության թեման:

Համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու Գայանե Հակոբյանն արժանացել է դոցենտի գիտական կոչման:

Համալսարանի պրոռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Գրիգոր Ասատրյանը ընդգրկվել է ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի՝

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող 064 հոգեբանության և փիլիսոփայության մասնագիտական խորհրդի կազմում:

Ուսումնական տարվա ընթացքում համալսարանում հրատարակվել են մեկ տասնյակ գրքեր, գիտաժողովների ժողովածուներ: Լույս է տեսել համալսարանում հրատարակվող «Հյուսիսսփայլ. գիտական հոդվածների ժողովածու» պարբերականի առաջին համարը (**այս մասին ավելի մանրամասն տես կից ներկայացվող ցանկում**):

Ուսումնական տարվա ընթացքում շարունակվել է համալսարանում ավանդույթ դարձած դասախոսական և ուսանողական գիտաժողովների անցկացման պրակտիկան: Այս առումով ուշագրավ է հատկապես 2016 թվականի նոյեմբերի 22-23-ին համալսարանում «Հայաստանը՝ տարածաշրջանային գիտակրթական կենտրոն» խորագրով անցկացված միջազգային գիտաժողովը՝ նվիրված Սանահինի համալսարանի հիմնադրման 1050-ամյակին: Գիտաժողովի աշխատանքին հայաստանյան բուհերից բացի մասնակցեցին արտասահմանյան երկրների բազմաթիվ բուհերի ներկայացուցիչներ: Գիտաժողովի նյութերը հրատարակվեցին առանձին ժողովածուով: Գիտաժողովի նախապատրաստական օրերին լույս տեսավ նաև համալսարանի դասախոս, պատմական գիտությունների դոկտոր Սուրեն Սարգսյանի «Սանահինի համալսարան-1050. համառոտ պատմություն» մենագրությունը:

2016 թվականի վերջերին համալսարանը լույս ընծայեց ուսանողական երկու գիտաժողովների նյութերի ժողովածուներ, որոնք մինչ այդ անցկացվել էին «Ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները ուսանողության աչքերով» և «Հայաստանի Հանրապետության անկախ պետականության զարգացման հեռանկարները ուսանողների աչքերով» խորագրերով:

Համալսարանական կյանքի ուշագրավ իրադարձություն հանդիսացավ մեր համալսարանի և Արցախի պետական համալսարանի ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների նախաձեռնությամբ նախապատրաստված և 2017 թվականի մայիսի 30-ին Հյուսիսային համալսարանի մեծ դահլիճում անցկացված «Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության զարգացման արդի հիմնախնդիրները» ուսանողական համատեղ գիտաժողովը՝ նվիրված մայիսյան եռատոնին:

## **ՑԱՆԿ**

### **2016-2017 ուստարում համալսարանում տպագրված աշխատանքների**

1. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները: Միջազգային գիտաժողովի նյութեր (21-22 ապրիլի 2015 թ.) – Եր.: Երևանի Հյուսիսային համալսարան, 2016, 532 էջ

2. Թումանյան – 145: Հովհաննես Թումանյանի ծննդյան 145-ամյակին նվիրված հանրապետական միջբուհական գիտաժողովի (6-7 մայիսի 2014 թ.) զեկուցումների ժողովածու: Կազմող, խմբագիր՝ Ս. Գ. Հովհաննիսյան. - Եր.: Հյուսիսային համալսարանի հրատ., 2016, 210 էջ
3. «Ամենաբարձր կոչումը՝ Մարդ/ Կազմ. և պատ., խմբ.՝ Գ. Հակոբյան.-Եր.: Հյուսիսային համալսարան, 2016. -362 էջ
4. «Ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրը ուսանողության աչքերով» և «Հայաստանի անկախ պետականության զարգացման հեռանկարները ուսանողների աչքերով». ուսանողական գիտաժողովի նյութեր – Եր.: Հյուսիսային համալսարանի հրատարակչություն, 2016, 116 էջ
5. Հյուսիսային համալսարանի «Իրավագիտություն մասնագիտության կայացման հիշարժան էջերը: - Եր., Հյուսիսային համալսարանի հրատարակչություն, 2016, 46 էջ
6. Սանահինի համալսարան-1050 (համառոտ պատմություն)/Ս. Թ. Սարգսյան, - Եր.: Հյուսիսային համալսարանի հրատ., 2016, 160 էջ
7. Տնտեսության զարգացման հիմնախնդիրները ՀՀ անկախության 25-րդ ամյակի շեմին: Միջբուհական գիտաժողովի նյութեր: /24-25 մայիս, 2016/, Եր.: Հյուսիսային համալսարան, - 2016. - 170 էջ
8. Հյուսիսսփայլ. գիտական հոդվածների ժողովածու/ Խմբ. խորհուրդ՝ Ա. Գ. Ճուղուրյան և ուրիշ.: Գլխ. խմբ.՝ Ա. Գ. Ճուղուրյան, - Եր., «Հյուսիսային համալսարան» հրատ., 2016, 114 էջ
9. Հյուսիսային համալսարան, գլխ. խմբ.՝ Գ. Հակոբյան /2016/N21
10. Ընտրանի (հոդվածների ժողովածու)/ Բ.Մակիչյան.- Կազմ. և պատ., խմբ.՝ Գ. Հակոբյան-Եր.:Հյուսիսային համալսարան, 2017, 260 էջ
11. Հայաստանը՝ տարածաշրջանային գիտակրթական կենտրոն: Միջազգային գիտաժողովի նյութեր (22-23 նոյեմբերի, 2016 թ.) – Եր.: Երևանի Հյուսիսային համալսարան, 2017, 194 էջ:

## **7. Հյուսիսային համալսարանի դրամաշնորհային ծրագրերի մասին**

Առաջնորդվելով ՄՈՒՀ-ի 2016-2020թթ. ռազմավարական պլանով ամրագրված դրույթներով՝ Հյուսիսային համալսարանի արտաքին կապերի բաժնի 2016-2017թթ.-ի գործունեությունը միտված է եղել համալսարանի արտաքին կապերի ընդլայնմանն ու միջազգայնացմանն ուղղված գործընթացները զարգացնող ու խթանող համապատասխան քաղաքականության ու ընթացակարգերի մշակմանը:

Մասնավորապես, ՄՈՒՀ-ի 2016-2017թթ. տարեկան ռազմավարական պլանով առանձնացված առաջնահերթությունների համատեքստում բուհի կողմից ներկայացված դրամաշնորհային ծրագրի հայտը հաստատվել է Կրթական ծրագրերի

կենտրոնն ՄԻԳ-ի կողմից և 2016թ. դեկտեմբերի 23-ին 'Կրթության բարելավում' վարկային ծրագրի շրջանակներում կնքվել է նոր դրամաշնորհային պայմանագիր՝ 'Հեռակա ուսուցման դասընթացների կազմակերպում' հեռավար կրթական տեխնոլոգիաների գույճըմամբ՝ կրթական ծրագրի իրականացման համար: Ծրագրի նպատակը մարզերում (մասնավորապես ծրագրով նախատեսված Լոռու մարզում) հեռակա կրթաբլոկի դասընթացների դասավանդումն է հեռավար կրթության մեթոդաբանությամբ: Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է հեռավար դասընթացների մշակում, ներդրում և կազմակերպում հեռավար կրթության Moodle հարթակում:

Միաժամանակ նշենք, որ 2013թ.-ից Հյուսիսային համալսարանն ընդգրկված է նաև Եվրամիության TEMPUS ծրագրի «VERITAS» (Զալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում) և «GOVERN» (Աջակցություն բուհական ինքնավարությանը և հաշվետվողականությանը. Բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից և Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ համակարգի մշակում՝ արդյունավետ փոփոխությունների իրականացման նպատակով) ծրագրերում: Երկու ծրագրերի շրջանակներում էլ համալսարանի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների կողմից իրականացված փաստերի հավաքագրման հիման վրա կատարվել են վերլուծություններ, որից հետո վերջիններս տարբեր եվրոպական բուհերում մասնակցել են վերապատրաստումների և իրենց կողմից ձեռք բերված փորձը ներկայացրել են համալսարանի մյուս աշխատակիցներին և ներդրել իրենց աշխատանքային գործընթացներում:

2017թ. առաջին կիսամյակում GOVERN և VERITAS ծրագրերի շրջանակներում իրականացվել են շահակից բուհերի արտաքին գնահատում միջազգային փորձագետների մասնակցությամբ, որոնց արդյունքները ներկայացվել են բուհերին:

2017թ. օգոստոսին համալսարանը, որպես կոնսորցիումի անդամ, ընդգրկվել է Erasmus + ծրագրի 'Միջազգային երիտասարդական կրթություն. ուսումնական պլաններ, հեռավար կրթության դասընթացներ և բաց կրթական նյութեր' դրամաշնորհային ծրագրում և նույն ժամանակահատվածում Լեհաստանի Լեզնոյի բարձրագույն կրթության դպրոցի հետ ստորագրել է ուսանողների և աշխատակազմի փոխանակման վերաբերյալ երկկողմանի համաձայնագիր:

## **8. Հյուսիսային համալսարանի 2016-2017 ուստարվա «Լավագույնների» մրցությունների արդյունքների ամփոփում**

1. 2016-2017 ուստարվա գործունեության արդյունքներով համալսարանի «Լավագույն ամբիոն» ճանաչվել է տնտեսագիտության և կառավարման ամբիոնը (վարիչ՝ Ա. Ճուղուրյան):

2. «**Լավագույն վարչական աշխատող**» ճանաչվել է արտաքին կապերի բաժնի պետ Սյուզաննա Սարգսյանը:

3. «**Լավագույն դասախոս**» ճանաչվել է մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի դասախոս, ֆիզ.-մաթ. գիտ. թեկ., դոցենտ Սահակ Միրզոյանը

4. «**Լավագույն հետազոտող**» ճանաչվել է Հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոնի դասախոս, համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար, բան. գիտ. թեկ., դոցենտ Գայանե Հակոբյանը

5. «**Լավագույն ասպիրանտ (հայցորդ)**» ճանաչվել է ֆինանսներ և հաշվապահական հաշվառում մասնագիտության 2-րդ տարվա հայցորդ Հարություն Խալաթյանը:

6. «**Լավագույն շրջանավարտ. մասնագետ**» ճանաչվել են՝

ա) «**Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (ըստ ճյուղերի)**» մասնագիտության գծով, բակալավրի որակավորման աստիճանով՝ **Անահիտ Ռաֆայելյանը** (առկա ուսուցում), **Լուսինե Պողոսյանը** (հեռակա ուսուցում)

բ) «**Իրավագիտություն**» մասնագիտության գծով, բակալավրի որակավորման աստիճանով՝ **Կատյա Գաբոյանը** (առկա ուսուցում), **Արփինե Պետրոսյանը** (հեռակա ուսուցում) մագիստրոսի որակավորման աստիճանով՝ **Զարուհի Մեջլումյանը**

գ) «**Մանկավարժություն և մեթոդիկա**» մասնագիտության գծով, բակալավրի որակավորման աստիճանով՝ **Արմինե Գասպարյանը** (հեռակա ուսուցում)

դ) «**Օտար լեզու և գրականություն**» մասնագիտության գծով, բակալավրի որակավորման աստիճանով՝ **Սվետա Մակարյանը** (առկա ուսուցում), մագիստրոսի որակավորման աստիճանով՝ **Հերմինե Թաշյանը**

ե) «**Լրագրություն**» մասնագիտության գծով, բակալավրի որակավորման աստիճանով՝ **Բագրատ Թովմասյանը** (առկա ուսուցում)

զ) «**Հոգեբանություն**» մասնագիտության գծով, բակալավրի որակավորման աստիճանով՝ **Մարինե Հակոբյանը** (առկա ուսուցում):

## 8. Համալսարանի 2016-17 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքները

2016-17 ուստարվա ավարտին բակալավրիատի ուսանողներից թույլատրվել են մասնակցելու ամփոփիչ ատեստավորմանը՝

համալսարանից՝ 2016-17 ուստարվա ավարտական կուրսերից	448
նախորդ տարիներին ամփոփիչ ատեստավորումը ձախողածներից	42
<b><u>ընդամենը՝</u></b>	<b><u>490</u></b>

նրանցից դիպլոմ ստացել են՝

համալսարանից՝ 2016-17 ուստարվա ավարտական կուրսերից	429
նախորդ տարիներին ամփոփիչ ատեստավորումը ձախողածներից	42

Գերազանցության դիպլոմ ստացել են

19

2016-17 ուստարում նախարարության կողմից չհավատարմագրված բուհերի շրջանավարտներից (իրավագիտություն, տնտեսագիտություն և լրագրություն մասնագիտությունները միասին)

ամփոփիչ ատեստավորմանը մասնակցելու թույլատրվել է 2+25=27

նրանցից ստացել են դիպլոմ - 22

**9. 2015-2016 և 2016-2017 ուստարիների ընթացքում հանրապետական մամուլում  
Հյուսիսային համալսարանի մասին հրապարակված հոդվածների**

**Ցանկ**

№	Հոդվածի վերնագիրը և հեղինակը	Թերթի անվանումը	Տպագրման ամսաթիվը
1.	20-ամյա գործունեության հիշարժան էջերը (հեղ.՝ Հյուսիսային համալսարանի ռեկտոր՝ Բ. Մակիչյան)	Կրթություն	27.04.2016
2.	Հյուսիսային համալսարանի կրթական հետքը (հեղ.՝ Կարեն Պետրոսյան)	Հայաստանի Հանրապետություն	01.06.2016
3.	Օրենքի գերակայության անհրաժեշտությունը բուհական համակարգում (հեղ.՝ Հյուսիսային համալսարանի ռեկտոր, «Պետ. հավատարմագրված հայկական համալսարանների ռեկտորների խորհուրդ» ՀԿ նախագահ՝ Բ. Մակիչյան)	Իրավունք	15.06.2016

4.	Կրթօջախը մրցակցային գիտելիքներ է տալիս. Հյուսիսային համալսարանը նշել է բուհի օրը (հեղ.՝ Գայանե Հակոբյան)	Հայաստանի Հանրապետություն	22.06.2016
5.	Հյուսիսային համալսարանը կնշի Սանահինի համալսարանի 1050-ամյակը (հարցազրույց Հյուսիսային համալսարանի ռեկտոր Բորիս Մակիչյանի հետ)	Կրթություն	07.09.2016
6.	Համալսարանի կրթական ավանդույթները (հեղ.՝ Գայանե Հակոբյան)	Հայաստանի Հանրապետություն	09.2016
7.	Ուժեղ պետության հիմքը (մտորումներ Սանահինի համալսարանի 1050-ամյակին ընդառաջ) (հեղ.՝ Հյուսիսային համալսարանի ռեկտոր՝ Բ. Մակիչյան)	Կրթություն	12.10.2016
8.	Սանահինի համալսարան – 1050 (հեղ.՝ Հյուսիսային համալսարանի «Թումանյան» մասնաճյուղի տնօրեն Արտակ Մակիչյան)	Թումանյանական աշխարհ	31.10.2016
9.	Թումանյանական բնաշխարհը՝ Հյուսիսային համալսարանում	Հայաստանի Հանրապետություն	12.11.2016
10.	Գիտաժողով նվիրված Սանահինի համալսարանի 1050-ամյակին	Հայաստանի Հանրապետություն	23.11.2016
11.	Հայաստանը՝ տարածաշրջանային գիտակրթական կենտրոն (հեղ.՝ Գայանե Հակոբյան)	Հայաստանի Հանրապետություն	24.11.2016
12.	Սանահինի համալսարան – 1050 (Երբ կրթությունը հազարամյակներով է հազեցած, նահանջելու իրավունք չունես) (հեղ.՝ Հեղինե Հովհաննսիյան)	Կրթություն	30.11.2016
13.	Պաշտոնյան՝ բուհի տանիք (Աննա Զախարյան)	Հայկական Ժամանակ	18.01.2017
14.	«Բարձրագույն կրթության մասին» օրենքի նախագծի քննարկմանը նվիրված համաժողով	Կրթություն	05.04.2017

	(հեղ.՝ Ա. Սարիբեկյան)		
15.	Հայ դպրության 1050-ամյա օջախը	Լոռու մարզ	10.06.2017
16.	Թերթի հունիսի 30-ի համարն ամբողջությամբ նվիրված է Հյուսիսային համալսարանին /մեկ տասնյակից ավելի հոդվածներ/	Թումանյանական աշխարհ	30.06.2017
17.	Համախմբված ու ոգևորված. Հյուսիսային համալսարանում կարևորում են ազգային արժեքները	Հայաստանի Հանրապետություն	02.09.2017
18.	Հյուսիսային համալսարանը «նվաճեց» Արագածի հարավային գագաթը (հեղ. տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Արմեն Ճուղուրյան)	Կրթություն	06.09.2017

Հայաստանի Հանրապետության բուհական համակարգում Հյուսիսային համալսարանը հանրությանը տեղեկատվություն տրամադրելու, ՁԼՄ-ներում ներկայացված լինելու առումով գտնվում է առաջնային դիրքերում: Կրթության՝ թերթի գլխավոր խմբագրի խոսքերով՝ իրենց շաբաթաթերթում լավագույնս լուսաբանվում է 4 բուհի՝ ԵՊՀ-ն, Ագրարային համալսարանը, Տնտեսագիտական և Հյուսիսային համալսարանների գործունեությունը, և այս քառյակի առաջին տեղում մեր բուհն է (առկա են բոլոր հրապարակումները): Այսինքն, լուսաբանման, ներկայացված լինելու առումով Հյուսիսային համալսարանը բուհական համակարգի առաջատարն է ըստ Կրթության՝ գլխավոր խմբագրի: Իրավունքը չնշեց կոնկրետ թիվ, բայց փաստեց, որ մեր բուհը դարձյալ լավագույնս է ներկայացված իրենց թերթում: Հայաստանի Հանրապետություն՝ օրաթերթում նշեցին, որ անցած ուսումնական տարվա ընթացքում ընդամենը 3 պետական բուհի վերաբերյալ տպագրել են մեկական հոդված, այն դեպքում, երբ Հյուսիսային համալսարանին անդրադարձել են 16 անգամ: